ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/38

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի 12.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/38 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.10.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կարիքների համար «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 18.09.2017թ. ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտը պետք է ներկայացնել էլեկտրոնային ARMERS համակարգի միջոցով:

«ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Ընկերություն, նշված գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 15.09.2017թ.-ին:

Պատվիրատուի կողմից 18.09.2017թ. ժամը 11:00-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն, սակայն նրա կողմից ներկայացրած փաստաթղթերը էլեկտրոնային համակարգում չեն բեռնվել:

Ընկերության կողմից որպես բողոքի փաստացի և իրավական հիմք վկայակոչվել է հետևյալը՝

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգը պետք է համարել չկայացած, քանի որ խախտվել է ընթացակարգին մասնակցելու իր իրավունքները հետևյալ փաստական և իրավական հիմնավորումներով՝

Ընկերության կողմից հայտը ներկայացնելու ժամանակ ARMERS համակարգը հաջողությամբ վերբեռնել է անհրաժեշտ փաստաթղթերը, քանի որ յուրաքանչյուր փաստաթուղթ համապատասխան բաժնում վերբեռնելու ժամանակ համակարգում նշվել է, որ բոլոր ներկայացված բաղադրիչները համընկնում են և ժամանակին ներկայացված են և հայտնվել է կանաչ նշումը, ինչը հիմք է տալիս փաստելու, որ այդ փաստաթուղթը սահմանված կարգով և ֆորմատով վերբեռնվել է:

Ընկերության կողմից սահմանված փաստաթղթերը պատշաճ վերբեռնելու մասին է վկայում նաև այն, որ հայտը վերբեռնելուց հետո Ընկերությունը էլեկտրոնային նամակի միջոցով ARMERS համակարգից ստացել է ավտոմատ ծանուցում հետևյալ բովանդակությամբ՝

- ARMEPS համակարգ - մրցույթային փաթեթը բեռնվել է
- Փաթեթի բեռնում
- Հայտ՝ ՄՀ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերում ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3
- Ստացականի հերթական համար՝ 000047076
- Տեղեկություն. մրցույթային փաթեթը բեռնվել է
- Դուք կարող եք հասնել Մրցույթի բաժնին հետևյալ կապուղով. http://www.armeps.am/epps/cft/viewETenders.do?resourceId=2567775

• Դուք ստացել եք սույն ծանուցումը, քանի որ բաժանորդագրված եք տվյալ ՄՀ-ին առնչվող ավտոմատ ծանուցումներին:

• ARMEPS համակարգում բոլոր գործողությունները գրանցվում են աուդիտի նկատառումներով: Սույն նամակը և կից ֆայլերը կարող են պարունակել գաղտնի տեղեկատվություն, որը պաշտպանված է օրենքով: Այն չպետք է ուղարկվի, օգտագործվի կամ կրկնօրինակվի առանց թույլտվության: Եթե Դուք սխալմամբ եք ստացել սույն նամակը, ապա խնդրում ենք այդ մասին տեղեկացնել նամակն ուղարկողին և/կամ համակարգի ադմինիստրատորին, և ջնջել նամակն ու կից ֆայլերը:

Խնդրում ենք չպատասխանել այս նամակին:

20.09.2017թ. Ընկերությունը info@armeps.am էլ փոստից որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին ստանում է նամակ հետևյալ բովանդակությամբ (որին կցված է եղել յուրաքանչյուր չափաբաժնի համար մասնակիցների կողմից ներկայացրած միավոր գների ցանկը՝ այսուհետ՝ Ցանկ)՝

Հարգելի մասնակիցներ,

Հայտնում եմ Ձեզ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով՝ քիմիական նյութերի ձեռքբերման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում ճանաչվել եք առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ուստի առաջարկում ենք սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգող Ա. Ապրեսյանին /apresyananahit@gmail.com, a.apresyan@sglmc.am/ ներկայացնել հրավերով պահանջվող որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը պայմանագիր կնքելու նպատակով կամ հայտնել Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով նշված Ցանկը պարզել է, որ իր կողմից ներկայացրած գնային առաջարկը բացակայում է, որից հետո կապ է հաստատում հանձնաժողովի քարտուղարի հետ և խնդրում ուղարկել արձանագրությունը:

Պատվիրատուի կողմից 18.09.2017թ. ժամը 11:00-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ փաստում ենք, որ «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն նշված գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել, սակայն նրա կողմից ներկայացրած փաստաթղթերը էլեկտրոնային համակարգում չեն բեռնվել:

Ընկերությունը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում խախտվել է Ընկերության «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» գնանշման հարցմանը մասնակցելու հավասարության իրավունքը, քանի որ վերջինս մյուս մասնակիցների հետ մեկտեղ նշված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել, սակայն Ընկերության հայտը գնահատելու հնարավորություն Պատվիրատուն չի ունեցել:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 15.09.2017թ. «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված մեկ այլ գնման ընթացակարգին՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-4» ծածկագրով գնանշման հարցմանը նույն կարգով՝ ARMEPS համակարգի միջոցով ներկայացրել է մասնակցության հայտ, որը նույնպես ընդունվել է և Պատվիրատուն ուսումնասիրելու և արձանագրելու հնարավորություն է ունեցել:

Ընկերությունը, Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում ընդունել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.10.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 12.10.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև վերջիններս միջնորդել են Խորհրդին պարզելու համար արդյոք www.armeps.am էլեկտրոնային համակարգում «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված փաստաթղթերի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել www.armeps.am էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդրի, թե՝ Ընկերության ոչ ճիշտ գործողության արդյունք:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ի պատասխան Խորհրդի 12.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/18507-17 գրության՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ն 17.10.2017թ. թիվ 4855 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշում:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով մրցույթին, որը կայացել է 18.09.2017թ. ժամը 11:00-ին հայտ են ներկայացրել թվով 5 կազմակերպություններ՝ «Վիոլա», «Դելտա», «Մեդիտեք», «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ները: Սակայն գնահատման ժամանակ armeps համակարգում հրավերով սահմանված փաստաթղթերը Ընկերության կողմից բեռնված չեն եղել, ուստի Պատվիրատուն հնարավորություն չի ունեցել գնահատել հայտը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով, համաձայն է ընդունել «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի պահանջը և չեղյալ հայտարարել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.10.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով

www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև ««ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն:

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 կետով արձանագրվել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 5 կազմակերպություններ՝ «Վիոլա», «Դելտա», «Մեդիտեք», «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ները:

2. Նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան, բացի՝ «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի, որի կողմից փաստաթղթեր էլեկտրոնային համակարգում չեն բեռնվել:

3. 16.10.2017թ. ժամը 11:30-ին կայացած Խորհրդի նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը միջնորդել է Խորհրդին պարզելու համար արդյոք www.armeps.am էլեկտրոնային համակարգում «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված փաստաթղթերի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել www.armeps.am էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդրի, թե՝ Ընկերության ոչ ճիշտ գործողության արդյունք:

4. «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միջնորդության համաձայն՝ Խորհուրդը վերը նշված խնդրի լուծման հետ կապված, 17.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1182745-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

5. Ի պատասխան Խորհրդի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.10.2017թ. գրությամբ հայտնել է, որ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով ընթացակարգին «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ կազմակերպության փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել: Ուսումնասիրելով մասնակցի կողմից կցված հայտի փաթեթը (.zip-)՝ պարզ երևում է տարօրինակ փոքր չափը (4.1ԿԲ), այն դեպքում, երբ

սովորաբար այն լինում է շատ ավելի մեծ՝ մի քանի ՄԲ (նույնիսկ մի քանի տասնյակ կամ հարյուր ՄԲ): Ապափաթեթավորելուց հետո որևէ կցված փաստաթուղթ չի հայտնաբերվել:

Հաշվի առնելով, որ հայտը ստեղծվել, փաթեթավորվել և բեռնվել է համակարգ մասնակցի կողմից իր իսկ համակարգչով և գտնվում է վերոհիշյալ վիճակում, կարելի է հաստատել, որ փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի 12.10.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից փաստաթղթերով, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի 17.10.2017թ. թիվ 4855 գրությունը՝ առդիրներով, ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի 386-Ն թիվ որոշման 4-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը*** կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև ««ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 կետով արձանագրել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 5 կազմակերպություններ՝ «Վիոլա», «Դելտա», «Մեդիտեք», «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ները:

Նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան, բացի՝ «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ՝ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի, որի կողմից էլեկտրոնային համակարգում փաստաթղթեր չեն բեռնվել:

16.10.2017թ. ժամը 11:30-ին ԳԲԽ-ԱՄ-2017/38 բողոքով կայացած Խորհրդի նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը միջնորդել է Խորհրդին պարզելու համար արդյոք www.armeps.am էլեկտրոնային համակարգում «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված փաստաթղթերի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել www.armeps.am էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդրի, թե՝ Ընկերության ոչ ճիշտ գործողության արդյունք:

«ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միջնորդության համաձայն՝ Խորհուրդը վերը նշված խնդրի լուծման հետ կապված, 17.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1182745-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ի պատասխան Խորհրդի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.10.2017թ. գրությամբ հայտնել է, որ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-17/21-3» ծածկագրով ընթացակարգին «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ կազմակերպության փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել: Ուսումնասիրելով մասնակցի կողմից կցված հայտի փաթեթը (.zip-)՝ պարզ երևում է տարօրինակ փոքր չափը (4.1ԿԲ), այն դեպքում, երբ սովորաբար այն լինում է շատ ավելի մեծ՝ մի քանի ՄԲ (նույնիսկ մի քանի տասնյակ կամ հարյուր ՄԲ): Ապափաթեթավորելուց հետո որևէ կցված փաստաթուղթ չի հայտնաբերվել:

Հաշվի առնելով, որ ***հայտը ստեղծվել, փաթեթավորվել և բեռնվել է համակարգ մասնակցի կողմից իր իսկ համակարգչով և գտնվում է վերոհիշյալ վիճակում, կարելի է հաստատել, որ <u>փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել</u>***:

Այսպիսով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում <u>հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը</u>:***

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդն արձանագրում է, որ նման փաստական հանգամանքներում Պատվիրատուն մերժելով «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ-ի կողմից 12.10.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ